

## PROCEEDINGS OF THE YEREVAN STATE UNIVERSITY

Physical and Mathematical Sciences

№ 1 (233), 2014

### ՀԱՍՏԱՌԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

#### ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

**Վ. Ս. Ասլամյան. Դե Մորգանի զիգզագաձև ֆունկցիաների մասին**

էջ. 3–6

Գոյություն ունեն Դե Մորգանի ֆունկցիաների հինգ ենթալրիվ դասեր: Դրանցից չորսը սահմանվում են, որպես որոշ հարաբերություններ պահպանող (քլիններ համովացող) ֆունկցիաների դասեր: Սակայն հինգերորդ դասը՝ կազմված Դե Մորգանի զիգզագաձև ֆունկցիաներից, հարաբերությունների միջոցով սահմանված չէ: Հոդվածում ներկայացված է. այդ դասի մեջ մտնող Դե Մորգանի ֆունկցիաները, նույնպես պահպանում են որոշ հարաբերություններ:

**Յոլ. Ռ. Հակոբյան, Ոլ. Զ. Հովհաննեսյան. Փոքրագույն քառակուսիների եղանակում երկմակարդակային վերապայմանավորման մասին** էջ. 7–15

Հոդվածում առաջարկվում է հանրահաշվական երկմակարդակային վերապայմանավորիչների կառուցման մի մոտեցում նորմալ համակարգերի մատրիցների համար, որոնք առաջանում են, եթե տվյալները մոտարկվում են կտոր առ կտոր զծային բազմաչափ ֆունկցիաների միջոցով՝ փոքրագույն քառակուսիների եղանակի կիրառմամբ: Կառուցման հիմքում ընկած է ստորակարգային ցանցերի համապատասխան, երկմակարդակային տրոհում՝ ենթակառույցների և մատրիցների: Ստուգված են վերապայմանավորված մատրիցների պայմանավորվածության թվի զնահատականները:

**Հ. Ս. Քամայյան. Բերնշտեյնի թեորեմի օպերատորային տարրերակ** էջ. 16–18

Ինչպես հայտնի է իրական առանցքի վրա սահմանափակ հավասարաչափ անընդհատ ֆունկցիաները կարելի է մոտարկել ամբողջ ֆունկցիաների միջոցով՝ Բերնշտեյնի դասերից: Աշխատանքում ներկայացվում է այս թեորեմի օպերատորային տարրերակը:

**Տ. Մ. Խուդոյյան.  $\beta$ -հավասարաչափ հանրահաշվի իրական մասին դեֆորմացիայի մասին** էջ. 19–21

Հոդվածում ուսումնասիրվում են  $\beta$ -հավասարաչափ հանրահաշվի, լոկալ, կոմպակտ հասուրովիյան տարածությունում, իրական մասի դեֆորմացիաները: Ապացուցվում է, որ եթե դեֆորմացիայի կիսախոսմբը պարունակում է ափինականից տարրերվող գոմե մեկ դեֆորմացիա, ապա  $\beta$ -հավասարաչափ հանրահաշիվը համընկնում է բոլոր անընդհատ, սահմանափակ կոմպլեքսարժեք ֆունկցիաների հանրահաշվի հետ:

**Ա. Բ. Մինասյան.** Ուղղի կրկնակի համակարգով ֆուրիեի գործակիցների մասին  
էջ. 22–25

Աշխատանքում ապացուցվում է, որ ցանկացած  $0 < \varepsilon < 1$ ,  $p \geq 1$  և  $f(x, y) \in L^p[0, 1]^2$  յուրաքանչյուր ֆունկցիայի համար, կարելի է գտնել այնպիսի ֆունկցիա՝  $g(x, y) \in L^p[0, 1]^2$ ,  $\text{mes}\{(x, y) \in [0, 1]^2\}$ , որ հաջորդականությունում բոլոր ոչ զրոյական անդամները՝  $\{|c_{k,n}(g)|, (k, n) \in \text{spec}(g)\} \sqrt{b^2 - 4ac}$  դասավորվեն բոլոր ճառագայթների նվազող հաջորդականությամբ:

**Բ. Հ. Սահակյան.**  $\langle \rho_j, W_j \rangle$  բացարձակ մոնուոն ֆունկցիաների ներկայացման մասին  
էջ. 26–34

Հեղինակի [1] աշխատանքում, մասնավորապես, մտցվել է  $\langle \rho_j, W_j \rangle$  բացարձակ մոնուոն ֆունկցիայի գաղափարը: Այս աշխատանքում որոշակի  $\{W_j(x)\}_0^\infty$  հաջորդականությունների համար դիտարկված են  $\langle \rho_j, W_j \rangle$  բացարձակ մոնուոն ֆունկցիաների դասեր և ուսումնասիրվում են նրանց ներկայացման հարցերը:

## ՄԵԽԱՆԻԿԱ

**Մ. Վ. Բելուրեկյան, Ա. Ա. Պապյան.** Սալշերտի մագնիսաառաձգական տատանումների խնդրի մասին արտաքին երկայնական մագնիսական դաշտի առկայությամբ  
էջ. 35–39

Հետազոտվում են էլեկտրահաղորդիչ սալշերտի ծովան տատանումներն երկայնական մագնիսական դաշտում: Խնդիրը լուծվում է բարակ մարմինների մագնիսաառաձգականության վարկածի հիման վրա, օգտագործելով իդեալական հաղորդչի մոդելը սալշերտի դիմային մակերևույթի եզրային պայմանների համար: Բերվում են տատանման հաճախությունների և մարման գործակիցների բվային արդյունքները՝ կախված մագնիսական դաշտի լարումից:

## ԲՆՖՈՐՄԱՏԻԿԱ

**Ա. Ա. Խաչատրյան.** Մոնադիկ տրամաբանական ծրագրերի օպտիմալացման մասին  
էջ. 40–47

Սույն հոդվածը նվիրված է մոնադիկ տրամաբանական ծրագրերի և հարցումների օպտիմալացման ուսումնասիրությանը: Ծրագիրը (հարցումը) կանվանենք մոնադիկ, եթե այն չի օգտագործում ֆունկցիոնալ սիմվոլներ մեծ տեղայնությամբ, և օգտագործում է միայն մեկ տեղանի պրեդիկատային սիմվոլներ: Նկարագրվում են ծրագրի և հարցման ձևափոխություններ, որով ցանկացած  $P$  մոնադիկ ծրագրի և  $G$  ֆունկտիվականներ չպարունակող հարցում ֆունկտիվ կապվում է մեկ այլ  $P'$  ծրագրի և  $G'$  հարցման, այնպես որ  $P'$  ծրագիրն որոշված է  $G'$  հարցման նկատմամբ և  $P' \models G$ , այն և միայն այն դեպքում, եթե  $P' \models G'$ : Նշենք, որ ձևափոխությամբ ստացված  $P'$  ծրագիրը նույնն է բոլոր հարցումների համար:

**Հ. Է. Սարգսյան. MINLA խնդրի լուծման մի ռեկուրսիվ մոտեցման մասին**

էջ. 48–50

Աշխատաքրություն ներկայացված է ռեկուրսիվ մոտեցում “Գրաֆի միմիմալ գծային համարակալում ըստ երկարության” խնդրի լուծման համար: Ներկայացված է տեղադրության միմիմալության հայտանիշ, որից որպես հետևանք ստացվում է երկկողմանի, Ռ-օրիենտացված գրաֆների դասում խնդրի բազմանդամային լուծելիության պարզեցված ապացույց:

**ՖԻԶԻԿԱ****L. Ռ. Աղյամ, Ե. Բ. Դայյամ. Կատիոնային պորֆիրիմների ազդեցությունը ԴՆԹ-ի հալման պարամետրերի վրա**

էջ. 51–56

Ուսումնասիրվել է տարրեր կողմնային խմբերով ջրալուծելի կատիոնների 3N- և 4N-պիրիդիլ պորֆիրիմների ազդեցությունը հորբի ուրցագեղձի ԴՆԹ-ի հալման պարամետրերի վրա: Ցույց է տրված, որ պորֆիրինի առկայությունը բերում է ԴՆԹ-ի հալման կորի պարամետրերի և տեսրի փոփոխության: Ստացված արդյունքներից մենք ենթադրում ենք, որ 3N-պորֆիրիմները ինտերվալացվում են GC-հարուստ տեղամասեր՝ նվազեցնելով այս տեղամասերի ջերմակայունությունը, ինչը և պատճառ է հանդիսանում հալման ինտերվալի նվազեցմանը: 4N-պորֆիրիմների համար պորֆիրին/ԴՆԹ փոքր հարաբերական կոնցենտրացիայի դեպքում “միանում” է արտաքին կապման մեխանիզմը: Արդյունքում այս պորֆիրիմների կոնցենտրացիայի աճին զուգահեռ ԴՆԹ-ի հալման պարամետրերի փոփոխություն չի գրանցվում:

**Զ. Ա. Գրիգորյան. Պոլիմերային մատրիքսի վրա երկշղթա ԴՆԹ-ի հեղուկ բյուրեղային փուլը**

էջ. 57–60

Հետազոտվել են ԴՆԹ-ի կարճ ֆրազմենտներով հեղուկ բյուրեղային փուլի ձևավորումը ջուր պարունակող պոլիմերային մատրիքսում, ինչպես նաև կողմնորոշիչ կարգավորման վրա փոխազդեցության պարամետրերի և պոլիմերի ծավալային ֆրակցիայի ազդեցությունը: Ցույց է տրվել, որ հեղուկ բյուրեղային կարգավորման առաջացումն եշ-ԴՆԹ-ում, որն ընկրնված է պոլիմերային մատրիքսի մեջ, տեղի է ունենում ծավալային ֆրակցիայի աճին զուգընթաց: Խզուրությունը և նեմատիկ փուլերի միջև անցնան ծավալային ֆրակցիան կախված է Ֆլորի-Հյուգենսի ջերմաստիճանից կախված պարամետրի արժեքից: Ստացված արդյունքները վկայում են ԴՆԹ-ի մոլեկուլների կարգավորման վրա պոլիմերային մատրիքսի ազդեցության մասին:

**Վ. Ա. Թերկողյան, Ա. Ժ. Բարաջանյան, Խ. Վ. Ներկարարյան, Կ. Լի. Մակերեսութային պլազմոն-պոլյարիտոնների նոդերն ուռուցիկ գլանային միկրոռեզոնատորում**

էջ. 61–66

Դիտարկվում է մակերեսութային պլազմոն-պոլյարիտոնների “շշնչածել” մոդերը ուռուցիկ գլանային միկրոռեզոնատորում: Մշակված տեսական մոդելը թույլ է տալիս ստանալ արտահայտություններ դաշտի մոդերի, ուղղութանակային հաճախությունների, ինչպես նաև կլանման և ճառագայթային կորուստների հաճախությունների լայն տիրույթում: Ստացված արդյունքները թույլ են տալիս գոնել ուռուցիկ գլանային միկրոռեզոնատորում օպտիմալ պայմաններ արդյունավետ էմիսիայի համար և կարող են ծառայել որպես կիրառական ուղեցույց միկրոռեզոնատորի համար: